

դեր աւելի երկարել մեր խօսքն, և թայմիկ հախառն թիւնները մի առ մի յիշատակել ատտ:

Ինչպէս կը տեսնուի, Երոտա և մանաւանդ Սեդրիա հետզհետէ աւելի կատարեալ կերպիւ կը ծանօթանան փոքր-Ասիոյ վիճակին, երկրին գեղձմաններն ու պիտոյքն աւելի գրասկան կերպիւ կը ներկայանան իրենց աչաց առջև, և պէտք եղած դարմաններուն վրայ հետզհետէ աւելի առողջ դադափարներ կը կադմուին: Բայց փոքր-Ասիոյ վիճակին այսպէս երեսն գալէն այդ երկիրն արդեօք իրական օգուտ մը պիտի քաղէ՞, Մեդիտի իր բարոյական և գործնական շնորհք մէջ պիտի յաջողի՞, և արդեօք փոքր-Ասիոյ մանաւանդ քրիստոնէայ բնակիչներն իրաց այս նոր վիճակին մէջ իրենց վրայ ինկած նոր պարտականութիւնները պիտի ճանչնան և ըստ այնմ այսուհետ հետադարձօրէն ընթացք մը պիտի բռնեն: — Եստէս պիտի հարցումներ են, որոյ պատասխանն ապագայն պիտի տայ, և փայտաքել էր այդ պատասխանն հաստատական լինէր:

Փոքր-Ասիոյ վիճակն ու պիտոյքը Տէպա լրագիրը թայմիկն աւելի սղմաբար ծանօթեցնել կը թուի: Փարիզի այդ կարեւոր լրագիրը թայմիկ վերջին յօդուածին վրայ խօսելով կը ճանչնէ թէ փոքր-Ասիոյ համար բազում հիւպատոսայ անուանուած երկրացեաց և օտարացեաց համար օգտակար պիտի լինի: Բայց միանգամայն կը դիտէ թէ Սուրիոյ բարեփոխումն ոչ այնպիսի հիւպատոսայ ճնշակ է, որպէս Եւրոպական վաճառականաց բազմութեան, իրթութեան յառաջացման և ժողովրդին համապատասխան արդիւններն է, որ կրնան խորութեան կը յաղթէ: Տէպա կը հաստատէ թէ թայմիկն առաջարկածն աւելի ազդեւն միջոցներ հարկ են, ինչպէս են Լիւքսեմբուրգի կազմութեան հետեւողութեամբ կազմութիւն մը, քրիստոնէայ կառավարչաց անուանում, քրիստոնէայից և մահմադականներէ բաղկացեալ տեղական գնդաորութիւն մը, և կանոնադր հեծեալացութեան մը, որոյ մէջ պէտք է առնուին ձեռագործի անընդունակ մարդիկ, և այնպիսիներ, որոյ թափառակի կենսք վարելու ողին զինուորական կրթութեանց և շարժմանց յարմար կրնէ դիտել: Մինչև որ, կրնէ Գաղղիական լրագիրն, այդպիսի գրադրում մը չդառնալ կարգ մ'անձանց համար, որք ուրիշ գրադրում չունենալով՝ ի վնաս արուեստաւոր և երկարադրած ժողովրդեան կապիւն, վերածնութեան ամեն ձեռնարկ կանխահա և ապարդիւն պիտի լինի, և Սեդրիական կառավարութեան ծրարիրն 30 կամ 40 տարի պիտի պահանջէ, մինչդեռ դարմանն արագ պէտք է լինի՝ եթէ անխառնափն զգուշ մ'առաքին առնուլ կուզուի:

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

Փարիզ 16 Սեպտ. Այսօր Փարիզի և Լոնտոնի Պորտալից մէջ գինեւորն անկման պատճառ եղաւ Ռուսիոյ կայսեր մահուան զրոյցն, որ յետոյ սուտ հանուեցաւ:

Լոնտոն 16 Սեպտ. Միջոցին եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Եգիպտոս խանէն նոր չափով մ'առնուած է, որ Բեռլինի զէպերուն համար ցաւ կը յայտնէ և յանցաւորները պատժել կը խոստանայ:

Անգղիոյ Փոթմանթ շառահանգստին գործ և ազգամթերք կը զր'ուին Աֆրիկա նաւան:

Լոնտոն 17 Սեպտ. Աֆրիկայի լուրերն Անգղիոյցոց դէմ տարածական տարածքութեանցը նկատմամբ թայմիկ հրատարակած լուրը հաստատող պաշտօնական տեղեկութիւն չեկաւ տակաւին:

Հնդկական կառավարութեան կողմէ արուած վերջին լուրեր կը ծանուցանեն թէ Ռայթըրի գործարարն Եգիպտոս խանին մէկ նոր նաւան կը ընդունել է, յորում Աֆրիկայի լուրերն Բեռլինի կողմէ քաջին համար ցաւ կը յայտնէ և միանգամայն յանցաւորները պատժել կը խոստանայ:

Մատերս Պ. Վաֆինկիթի և լորտ Մալիսպիլի մէջ անհապառնակ մը տեղի:

պիտի ունենայ Եգիպտոսական և Հնդկական կան խնդրոց կարգադրութեան մէջ համաձայն գործողութեան մը համար միաբանելու նպատակաւ:

Վիեննա 16 Սեպտ. Աւստրիոյ երեսփոխանական ժողովը սեպտ. 30 ին պիտի բացուի:

Ժողովին քննութեան ներկայութիւնը օրինաց ծրարներուն մէջ Պոմպիւ և Հերսէքի վարչութեան վերաբերեալ ծրարը մ'ալ կայ:

Լոնտոն 16 Սեպտ. Օսմ. Բան. 11/16

Փարիզ 16 Սեպտ. (Փոքր Պորտալ) Օսմ. Բան. 11/17 1/2

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թուրքո-Հելլենական յանձնախմբին հինգերորդ նիստն յառաջիկայ երեքշաբթի օրը տեղի պիտի ունենայ: Այս նստին մէջ, Հելլենական պատուիրակները Բ. Դրան երկրորդ յայտարարութեանը պիտի պատասխանեն:

Ինչպէս կը յիշեն ընթերցողք, Բ. Դրան երկրորդ յայտարարութեանը Հելլենաց երկրորդ յայտարարութեան պատասխանն էր. այս վերջինն ալ Բ. Դրան առաջին յայտարարութեան պատասխանն էր: Հելլենք այժմ երրորդ յայտարարութիւն մը պիտի ընեն:

Վիեննայէն քաշուած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Պոմպիւ և Հերսէքի Աւստրիական զորաց ընդհ. հրամանատար Վիլհելմ Երկրորդի գլխավորութեամբ Օսմանեան առաջին պատուիրակ Հիւսնի վաչային կուչուեք մը տալով, Նովի-Պապարի դըրաւման մասին երկու կառավարութեանց միջև տիրած սիրալիր համաձայնութիւնն յիշել է մեծ գոհութեամբ, և յետոյ Աւստրիոյ և Թուրքիոյ դաշնակցութեան համար բաժակ առաջարկել է:

Թէրեզմանը Հադըքաթ լրագիրն հետաքրքրական լուր մը կուտայ: Կը ծանուցանէ թէ Եգիպտական կառավարութիւնն Հապէշառանայ հետ նորէն պատերազմ ունենալուն պատճառաւ խնդրել է Օսմանեան կառավարութեան, որ կամ Եգիպտական զօրաց թիւն աւելցնելու արտոնութիւն չնորհէ, և կամ Եգիպտոսի պաշտպանութեան համար ուրիշ միջոց մը տնօրէնէ: Բ. Դրան այս խնդիրն ի նկատ առնելով՝ որպէս է դաժանակամ զօրաբանակէն առան վաշտ զօրք ըրել, որք Եգիպտոսի ժողովրդեաց տեղերուն և քաղաքաց մէջ պահպանութիւն պիտի ընեն, և այսպէս Եգիպտական կառավարութիւնն ալ պիտի կրնայ իր բոլոր զինուորական զօրութիւնն Հապէշայ վրայ զրկել:

Պաշտօնական ազդ. մը ծանուցանելով թէ մանք. դժուարութիւն կը յարուցանեն 1222 թուականը կողմ հինգ ունենալուն ընդունելու, իրը խորհրդակցել, կը յայտարարէ թէ այս կամ կամ անհիմն է, թէ այդ տեսակ հինգ ունենալուն և անոնց կողմնակները տեղութեան կանոնադր դրամաց մասը կը կազմեն և հետեւաբար տեղի չկայ զանոնք չընդունելու:

Կիրակի օրն Ատա-Բազարի նախորդ դպմադամ Նուրէթ Էֆէնդիին, որ Նիկիոյ վրայէն Ատա-Բազար կերթար, անկից երկու ժամ հեռու Սալը-Մէշէ ըստած տեղն սպաննուեցաւ աւազակներէ: Ատա-Բազար զոհն էր իր զինքներն ու դրամն իրենց յանձնէ, բայց Նուրէթ Էֆէնդիին ընդգրկութիւն ընելով՝ աւանց վրայ ըրվելէ արձակել փոր-

ձեր է, բայց անմիջապէս դնդակի երեք հարուածներ ստանալով սուս պատ ինկել է, իւր հետ գտնուող երեք տնէինք փակեր են: Չարազործք տակաւին չեն բռնուած:

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԵՐՈՒՄՈՒՄԻԷ
(Պորտալի զոյ է):

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՆԵՔ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՅ

ՆԱՄՈՒԿ Ի ՏՐԱՊԵՉՈՒՆԷ

(Շար. և վերջ տես թիւ 2419)

Գիշերային ժամը 2ին տուններ, միմեք և տնէրեւո ժամանակ, ութ քուրդերն միասին պարպելով տարածանակներն յարձակեցան մեր վրայ. մեր կարաւանագետն, որ հրամանատարի պաշտօնն ստանձնած էր, ձայն հանածին պէս ատրճանակներն և ընթրվէն սկսան անդադար պարպել, և կարաւանին մէջ գտնուած տնէն վախկոտներն անդամ աչքերն դարձած էին որ կարկուտի նըման քարեր տեղայնելով սպառնալէն քուրդերն վախցուցին և շուտ քնցուցին, որք ժամանակ չէին ընելով որպէս զի կրկին լցնէին իրենց ատրճանակներ, քուրդք ժամէն աւելի չկրցան դիմանալ և ի փախուստ աւաճաղարեցին, զարմանալով և հայհոյելով: Կէս ժամու չափ յետոյ, Չախմախ գիւղի թիւրքեր յառաքելի (*) եկան. մեք կարծելով թէ քուրդերու բարեկամներն են դարձաւ սպառնացանք կրակ տեղալ եթէ մեք տնէն կարաւանին. վերջապէս, երկու կողմէն ալ միասին անձ իրար մօտենալով բանակեցան և հասկըցուեցաւ որ մեք օգնել եկած են, թէ մի Հայ փաշա (**) որ խնուէն անցնելով վան կերթայ եղբոր, խնուսի կառավարական ժողովին Հայազգի անգամ խորով պէյին հետնայն գիշեր Ալիբեյան իջեանալ լինելով, աղմուկն իմացել և ուղեր է տեղեկանալ թէ ինչ կայ: Յիշեալ Հայ փաշան լուր յղած էր թէ չխախտմը, կրկին յարձակում եղած ժամանակ քուրա զօրքեր կը հանին օգնել մեզ: Այս պատահար փոքր իշաւէ մանրամասն դրեցի, որպէս զի ցոյց տամ թէ միւլթիւն և անխառնութիւն ինչք կրնան. վախկոտներ անգամ քարերով կարող են հայրենիքն սպառնալէն քուրդեր եթէ անխախտութիւն ցոյց տան. թէ միայն աղօթել օգուտ չունի, պէտք է միանաւանդ կրաւել և ոչ թէ անձնատուր լինել. թէ

* Մի տեղի վերայ յարձակում եղած տնէն չընկալ տեղեր գտնուողներն երբ իմանան աղմուկն, միտաւորին օգնել կուզան, այդ կը կոչուի «յաւարի» (կամ հափարի) զալ:

** Կարծեմ թէ այդ Հայ փաշա կոչուած Արիկ Էֆէնդիին պէտք է լինի, որ կայսերական տեսչներն իրենք քարաւ դար բերած էին իրենց հետ Վարին, բայց այն տեղ Վանայ ձիւնայթ Մէշէի տակ խաղա՜ ընտրուած լինելով, այդ օրեր կերթար Վան: Երբ Ալաբերկեան Մարկոս Էֆէնդիին Վան եկաւ 3 տարի չափ յառաջ նահանգապետի օգնականի պաշտօնով, Հայ ժողովուրդն այնպիսի չքեղ ընդունելութիւն ըրաւ անոր և ինքն ալ այնպէս ազդու կերպով կը վարուէր իւր պաշտօնի մէջ, որ Թուրքերն չառ կրպտուէին և Մարկոս փաշա կանուանէին. մոլեռանդներն ալ «կեռուր փաշա» կանուանէին: Եւ ժողովրդական գրութիւն և միանգամայն փաշայական կերպարան (այդպիսի արտաքին երեւոյթներն ալ նկատի կ'առնուին այս կողմը) մեծ համակրութիւն և պատիւ ներշնչած էին ժողովուրդին: Այդ ժամանակէն սկսաւ մի սովորութիւն, որ Թուրքերն փաշա տիտղոսով կանուանեն երբ այս կողմը մի համառուար Էֆէնդիին գայ:

«Երբ» բառն որ գրեթէ ամեն նոր առաջարկի դէմ կը գործածուի, անտեղի և վնասակար է. ինչ որ առաջարկեալ, այստեղ կ'Պոլիս չէ, այդպիսի բան չըլլար, կրնան, մինչդեռ տեղի ճիշդ կը լինէր եթէ ըսէին այդ գաղափարով մարդեր թէ՛ մեք անանկտան եւմք, չեմք կարող ընել: Այս ԶԼԼԱՐ բառը՝ զոր աւանդաւաններն ու հնապաշտներն իրրե վաճան կը գործածեն այս կողմեր ամեն նոր առաջարկի դէմ, ըստ իս, յառաջդիմական գործին գլխաւոր խոչընդոտներն մին եղած է. տեղեւաներն ու իմաստակներն ազդային գործի համար չաչառուել ուղած ժամանակ, դժուարն իւր անհնար կը ներկայացնեն կը յառաջատեղներն Ժողովուրդն, և իրենց անգործութիւնն արդարացնել կաշխատին: Այս չըլլար բառն է դարձեալ պատճառ, որ չտանք չեն մնար իրենց հայրենիք և կը պահգլխաւին կ'Պոլիս սովորութիւն գործեր է իրենց մէջ պանդըրատութիւնն, և երբ ըսեն թէ ձեր հայրենիքի մէջ կրնաք այսինչ կամ այնինչ գործ ընելով չահել և չպանդըրաւել, կը պատասխանեն ԶԼԼԱՐ թէ և համազուին ալ թէ ըսածդ ճշմարտութիւն է, «Երբ» բառով կաշխատին արդարանալ: Այս Մուշիկներ, վանցիներ եւ, որք սկսած են կ'Պոլիս հայրենիք վերադառնալ, այն պայմանաւ որ այնտեղ աշխատին, կապաղուցանեն թէ չըլլար ըսելով խաբէութիւն է: Խորհուրդ կուտով որ ամեն հայրենիք վերադարձողներ առանց վէնքի ճանապարհ չենն: զի ճանապարհները վտանգաւոր են. աղօթքով միայն ազատուիլ չէ կարելի, պէտք է աչք տանել արիւնհեղութիւնը. պէտք է յիշեն այդ աղօթքներ, որ Քրիստոս անգամ շատ աղաչեց և աղօթեց որ եթէ հնար էր՝ արիւն չլծարիւմ աղատութիւն տար մարդկային, աղօթքն բայց այդ աղօթքը ընդունելի չեղաւ և հարկ եղաւ որ Քրիստոս արիւն թափէ և այդ կերպիւ մարդկային ազատութիւնը ձեռք բերէ. ուրեմն նորք կաղթեն միայն և չեն ուղեր կուրի, կը յանդգնին կարծել թէ իրենց աղօթք Քրիստոսի աղօթքէն աւելի զօրաւոր և ընդունելի է. նա որ կը թողու իւր հայրենիք՝ մինչդեռ կարող էր չթողուլ և աւանդական սովորութիւնն յարգելով միայն կը պանդխտի կ'Պոլիս, անխառն է. և նա որ կ'Պոլիսէն կը վերադառնայ իւր Հայրենիքը առանց վէնքի՝ եթէ ինքն աւելի անխառն է: ճանապարհներն շատ տեղեր կը պատահէին մեք Թուրք գաղթականներն որք խումբ խումբ կուղային կարսի կողմերէն դէպ Տաճկահայաստան, սուր քաղցած և ամեն բանէ զուրկ վիճակի մէջ լինելով, կրնան միառաւ բեր լինել, խնուսի զիւղերէն Գաւրա-Չօղան և Նամանգու բուրդովն Հայրենակ գիւղերն երբ դնայինք, տեսնեք որ Ռուսաստանէն եկած քուրսերով և թուրքերով լեցուցեր են այդ գիւղեր, Հայերն արտաքին լով իրենց տուններէ փորոյններն թուրքեր են նոցա կրնան և օրերներն, որք Հայկական զեղեղիւթեան տիւ պայն կը ներկայացնեն և այդ բանի մէջ նշանաւոր են այս գիւղի Հայուհիներ. նոցա տուններ դրաւեր են Թուրք գաղթականներ ձրիապէս: Պատրիարքարանն տեղեկութիւն ունի՝ արդեօք այս վիճակէն, Հայաստանն ոչ թէ միայն անուանով, այլ և գործնականապէս կաշխատին Քիւրդըրտան դարձնել. . . Եւ այս տեղ չեմ ուղեր մանրամասն ներկայացուել զանազան գիւղերու ազդու համալըն թէ ո՞ր տեղ Հայեր շատ են և ո՞ր

տեղ թուրքեր եւ, զի այդ բաւական
դժուար է ճիշդ ներկայացունել և
անցորդը ճանապարհորդին դարձ
չէ : Արժ. վաճան վարդապետ, որ այժմ
կարծիքն կը գտնուի աղդային պաշտո-
նով, իւր մասնագիտութիւնն արած է
զայդ և բաւական մանրամասն տեղե-
կութիւններ հաւաքելով ճիշդ հա-
շիւներ գրած է : Երբ առաջնորդա-
րան գնացի, տեսայ որ մի քանի տա-
րեկան Սաւաթիւր և իւր գրած դա-
նազան տեղեկագիրներ առջին շա-
բաթ՝ համեմատութիւններ կրնէր և
այդ աղգահամարի դործերով պա-
տադած էր : Արժ. վաճան վարդա-
պետ, մեր տեսակցած տոնէն մի շատ
խեղցի առաջարկութիւն ըրաւ, որ
վրայ կը հրաւիրուի և Պատրիարքա-
րանի և ամբողջ աղդի ուշադրութիւն
Պէտք է, ըսաւ, որ Պատրիարքաբա-
նի կողմէ օրինաւոր ամսականով հա-
տատուն Հայաստանի գլխաւոր քա-
ղաքացի մէջ գործակատարներ, բա-
նիւրուն, իրաւագէտ և գէթ մի Եւ-
րոպական լեզուի ծանօթ երկրաստոր-
ներէ, որք Եւրոպա կամ Կ. Պոլս
ուսում առած լինին ու գիւղացւոյ
իրաւունքներն և դատերը պաշտ-
պաններ իրր փառաբան, վարձ չը-
սանալով գիւղացիներէն, քանի որ
կառավարական դատարանոց առջև
փառաբաններ կընդունուին : Շատ
լուս կը լինի որ օտար քաղաքներէ
այս կողմեր եկող ուսեալ երկրաստոր-
ներ և ընտանիքներ շատնան և ար-
դէն այդպիսի փառաբան տեսնել
կ'սկսիմք : Կարին իմացանք որ մի
քանի շաբաթ յառաջ Կ. Պոլսէն ե-
րեք ընտանիք եկին և դէպի Մուշ
կողմեր գնացեր են հաստատուիլ :
Օգոստ. 1ին կարին մտանք, տեսանք
որ Ռուսաստանի ուսեալ Հայ երկրա-
ստորներն Պ. Սեդրակ Մանգլինեանց
և Պ. Մատթեանց կարին եկած, նոյն
օր կը մեկնէին կարինէն դէպի Մուշ
և անկէջ ալ դէպի վան, երկրին և Ա-
րարատեան ընկերութիւն վարձարան-
ներն աչքէ անցաներու և տեղեկու-
թիւն հաղորդելու նոցա վիճակի վը-
րայով Ռուսաստանի Հայերին : Պ.
Մանգլինեանց մասնագէտ մանկա-
վարժ է Գերմանիոյ մէջ ուսում ա-
ռած Մեծ Պ. Մկրտիչ Մանասոր-
եանցի ծախքով : Պ. Մատթեանց
ալ, մի աշխոյժ երկրաստոր, մաս-
նագէտ հաղադործ է Չուիցերիոյ մէջ
ուսում առած : Օրհնեալ լինին որք
կայցելէն խեղճ Հայաստանի, և կու-
ղեն օգնել նմա : Օգոստ. 8ին, Կիւ-
միւշխանէի մօտ պատահեցանք Մը-
շեցի Ամրիկեանց Յովհաննէս աղայի
որդւոյ, որք վենետիկի վանքին մէջ
իրենց ուսումն առած կը վերադառ-
նային Մուշ, աշխատիլ իրենց հայ-
րենիքի մէջ : Տրապիզոնի մօտ ալ մեզ
դէմ եկաւ Եւրոպական վերադարձ
մի հայազգի երկրաստոր, իսկ և սե-
մօրուսաւոր : Բայց մեր նստած փու-
ղ օնն արագապէս կերթար, չկրցայ
իմանալ թէ ո՞վ էր : մեր ուղեկիցնե-
րէն մին հարցուցեր էր և մեզ տե-
ղեկութիւն տուաւ թէ մի ուսեալ
երկրաստոր է որ վան կերթայ ե-
րեք : վերջապէս, մի ուրախալի ե-
րեքով է այս զոր կը փութամ հաղոր-
դել Մասիսի ընթերցողաց թէ ամեն
կողմէ ուսեալ երկրաստորներ կու-
ղան այցելել Հայաստան և օգտա-
կար լինիլ : Հայաստանի ժողովուրդն
ալ սկսած է փութիլ ի շատէ ինքնա-
պաշտպանութիւն ունիլ կարնոյ մէջ
Հայոց և Պարսից կռիւր ձեռ հաղոր-
դած կը լինի անշուշտ կարնոյ Չեր
սեփական թղթակիցն թէ սրպէս Հա-
յեր զենքի դիմած են որ պաշտպա-
նեն իւրեանց անձ Պարսիկներու սու-
րերու դէմ : Բայց բաւական չէ որ
օտար քաղաքներէ Հայեր Հայաստան

դան : պէտք է որ Հայաստանէն ալ
մի քանի տղաքներ առաքուին Եւ-
րոպա, որ այն տեղ զանազան ու-
սումներ և արհեստներ ուսած վե-
րադառնան Հայաստան և այն տեղ
ուսումներն և արհեստներն ծաղի-
ցունեն :
Էրզրումէն մեզ հետ ուղեկից էին
40ի չափ թուրք դպրոցականներ, որք
նահանգային վարժարանին մէջ ի-
րենց ուսում աւարտած էին և զորս
կառաքէին Կ. Պոլս աւելի բարձր
ուսում ստանալ : Կը մտածէի թէ
մեք դեռ 4 տղայ չենք առաքած
Եւրոպա որ այն տեղի վարժարաններն
մանեն և Հայաստան վերադառնա-
լով աշխատին : Յրաններէն և կամ
մի այլ Եւրոպական լեզու մտցունել
Հայաստանի վարժարաններուն մէջ
շատ անհրաժեշտ է : եթէ մեր նպա-
տակ տիրապետական դպրոցներ միայն
ունենալ չէ : Պէտք է վերջապէս հա-
մադրել թէ ու Եվրոպի կողմէ միայն
կարգաւ բաւական չէ : Եւրոպական
նոր և ազատական դադարներն
պէտք է հաղորդել Հայաստանի ժո-
ղովուրդին : Քանի որ Եւրոպական տե-
րութիւններն յանձն առած են հըս-
կել Հայաստանի բարենորոգումնե-
րուն վրայ, և հիւսկատաութիւններ
կը հաստատեն Հայաստանի գլխաւոր
քաղաքներն, հարկ է որ Հայերն ալ
մի Եւրոպական լեզու ունեն և Եւ-
րոպացիներու հետ յարաբերութիւն
հաստատել կարենան : Ուրախ եմք
որ վանայ աղդային վարժարաններու
հոգաբարձութիւններն օրինակ առ-
նելով Արարատեան ընկ. վարժապե-
տանոցէն, սկսած են Յրաններէն և
Թուրքերէն դաստիարակութիւն մե-
ցունել իրենց վարժարաններուն մէջ :
Նամակս կը վերջացունեմ, կառա-
վարութեան աշխարհութիւնն հրաւի-
րելով Տրապիզոնէն Էրզրում եղած
կառուղիին վրայ, ուր շատ տեղերն
խանդարուած, քիչ ատենէն անդոր-
ծողքերի պիտի գտնուայ թիմէ չլին-
ալ : Արդէն Էրզրումէն վան բնաւ
կառուղի վայ և շատ դժուար է
ճանապարհորդութիւնն : Բայց Տրա-
պիզոն-Էրզրումի ճանապարհն որ շատ
բանուկ է, գէթ պէտք է որ մի լաւ
կառուղի ունենայ :
Ընդունեցէք, խմբագրապետ Տէր
յարգանքներս, և հաճեցէք մի ան-
կրն շնորհել ներկայիս Չեր պատ-
ւական օրավերթի մէջ :
Մ. Փաշեւաթեան

ՊԱՐՄԱՆԱՅՈՑ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ
(Երբանուսթիւն Դեմ Բեմ 2419)

Թէ հրան մարտաբաղդ լինելով Պարս-
կաստանի, վիճակաւորեալիս օգոստ և իշտ
այցելուելեան եկեր են Վեհ. Գահին :
Անցեալ չըմաններն աղօտ լուսոյ տակ կե-
րի մեզ, Ս. Թաղէն մակսկողան եր-
կու անդամ եկաւ Թէ հրան, Հայ ժողո-
վորդն ընդ առաջ ելնելով բերին քաղաք
զայն, թաղաւորին ներկայացաւ Հընդ-
կաստանի և Ասպահանու բաներէն ըն-
ծաներ մատուցանելով մեծ ընդունե-
լութիւն դուռ, զանազան խնդիրներ
ունէր Չուիցու կամ հայաբնակ գիւղե-
րի համար, Վեհ. Գահն ընդունեց, ար-
տունութիւն ստացաւ, իւր հոնձարեղ և
քաղցրաբար լեզուաւ տէրութեան պաշ-
տանակալաց և ժողովուրդոց սիրտը միշտ
զրաւած էր :
Յետ այնու եկաւ Ս. Մովսէս եպիս-
կոպոսն, որովհետեւ երեսփոխան էի, և
կուգիլ Թէ հրանու վարժարանն աւելի
հաստատուել, աւելի արատաւով ընդունե-
ցինք դայն, փառաւոր մի տուն պատ-
րաստեցինք հինգ սենեակով, Թէ հրանու
Հայոց տուններն ինչ երեւելի բան կար,
այն տեղ էր, շատ կարաւիք արձաթե-
ղէն էին : Գալուց երկօրեայ ճանտարհ
ընդ առաջ գնալի, առանձին ամեն բան

պատմեցի, վարժարանի, վիճակաւոր քա-
հաններն և ժողովուրդոց զորութիւնն ի-
մաց տուի : Նա մանաւանդ քահանայից
ընթացքն, երբ ժողովուրդն վատ ընթա-
ցից համար կոտորեց զքահանայն, նո-
քա ըստ օրինի կը պատասխանեն, և
մենք կը նայենք որ իրաւունք ունին, ու-
րովհետեւ մեծ ծախքեր ունին ըստ իւր-
եանց աստիճանն, բոլորն մահաբաւա-
նօրէն պատմեցի իւրեան : Ս. առաջնոր-
դըն յայտնեց թէ Վեհ. Կոթողիկոսէն
առաջին պատուէրս սա է որ վարժա-
րաններն միշտ հաստատուել հետեւիմ, և
ուր ուրք հարկաւոր է նոր վարժարան-
ներ բանամ, երկրորդ պատուէրս սա է
որ ինչ քահանայ վիճակ է գտում, կինն
հետն լինի, և մինչ մահն այնտեղ մնայ-
բայց ափսոս, այս խօսքն (Վեհ. Կոթողիկոս)
զիւզուեմ մնաց, հետն վեր շտուցի վեր-
ջապէս շատ խօսեալուց յետ ես առաջ ե-
կայ քաղաքն, բոլոր ժողովուրդն ընդ ա-
ռաջ դուրս բերի, հեծեալ և հետեակ-
տէրութեանց պաշտօնակալաց խմաց տը-
ւինք, նմանապէս Ռուսաց զեաւանա-
տանն : Կարդ է տեղս, որ երբ մի երեւելի
պաշտօնակալ քաղաքն ժամանէ, միւս
պաշտօնակալը ի պատիւ նորա յառաջ
կուղարկեն մի ձի ոսկեաւորով, որ է (եւ-
տեղ) : Մեր Սրբազանն այն օրը եօթն
հատ ունեցաւ, և մի կարծ Մատթիլի էլ
Մեմարիքէն : փառաւոր հանդէսով եկաւ
քաղաք : Բոլոր Պարսիկը դարձեալ մը-
նացին, որ այսպէս բան չէին աեսած :
Շատ երեւելի մարդիկ, մինչև անգամ
Մայր էլ Մեմարիքն տեսուէր եկան, և
փառաւոր կերպով դնաց թաղաւորին
ներկայանալու : Ժողովուրդ շատերն յետ
կամ առաջ լինեալ, ինքն ձիւս վրայ նըս-
տած, և մի ձիւս որ դաւազանի վերայ
քողն ձգած առնէն կը տանէր : Թաղա-
ւորին ներկայացաւ, սովորութիւն չկար
որ եպիսկոպոսներն թաղաւորի մօտ նըս-
տին, բայց թաղաւորը քաղաքաւորու-
թիւն ի դործ դնելով, իւր ուղարկ ու-
րի վերայ տեսութիւն արեց, մէկ քաղ-
աքի վերայ խօսեցան, յետոյ երեւելի
պաշտօնակալաց տեսութեան դնաց մօտ
երկու ամիս մնաց Թէ հրան, մեզմէ եկե-
ղեցոյ, վարժարանի հաշիւները պահան-
ջեց, մենք օրինաւորապէս հաշիւներն
ցոյց տուինք, շատ մանրամասնաբար քնն-
նութիւններ անելով պատճառաբանու-
թեանց ձեռնարկելով կեղծակցանք մեր
հաշիւն : Մի օր մօտիմ մեզ հետ իւրեւ
խոստովանանք շատ խօսեցին յետ, ըսաւ
թէ ինչ ես խոստանում : Սրբազանին օրձեր
հաշուց տեսարակ կընէ, ես դարձեալ
մնացի, որովհետեւ յոյս ունէի որ Սրբա-
զանից՝ իմ այցքան կրած նեղութեանցս
փոխարէն մի պատիւ ստանայ : յուսա-
հատուելով պատասխանեցի, ես իմ դոր-
ծին մէջ պահատութիւն չունիմ, և այ-
սօրունից հրաժարուած եմ այդ գոր-
ծէն, ուրիշ յանձնեցէք : Քանի օրից յետ
մի ժողով դուրսեց, բոլոր Թէ հրանու
Հայերն հաւաքեց, մեր հաշիւն ծայրէ-
ի ծայր ժողովուրդի առաջ կարդաց, և մի
պարտք ժողովուրդի վերայ դրեց, թէ ով
այս հաշուի սխալութեանը տեղեակ է և
չառնէ՝ պարտական է, և երեսփոխան հը-
րաժարուած է : ուրիշ մի անձը ընտրեք,
ևս կարգաւ երթամ : Ժողովուրդը դար-
մացած մնալով այս նոր եղելովեանն,
բան չտան, զեաւցին : առաւօտ ամեն
կողմէ շնորհակալութիւն և կրիւն իմ այս
դործին վերայ հաստատ մնալուս համար
թղթեր ներկայացան Արաղանին : Իսկ
ես վարժարանն հաստատ պահելու հա-
մար ընդունեցի կրիւն այդ պաշտօնն :
Բայց գնալու օրերն նորանից խնդրեցի
որ մի ընդհանուր ժողով կազմէ, վար-
ժարանի համար կարգ կանոն դնէ, և
ժողովուրդն իրենցմէ չորս անձինք ընտ-
րեն, որպէս վեր չորս անձանց գիտու-
թեամբ և օգնութեամբ կարողանաւ ե-
կեղեցին և վարժարանը կառավարել Ըն-
դունեց, ժողով դուրսարեց, չորս անձինք
հաղարարուեալ ընտրեց : Բայց անյարմար
մարդիկ էին վարժարանը կառավարելու
համար : Ընդհակառակն մենք պաշտօն
չունեցանք վարժարանում : յետ նորա
շատ ջանեց վարժարանն խախտուեցաւ,
այն աստիճան ժողովուրդն զրուեցոյց որ
գնալուց երեք անձինք յուղարկաւոր ու-
նեցին : Զարմանալի է որ այս եպիսկո-

պոսներէն ոմանք երբ Պարսկաստան են
գալիս, կարծես թէ Պարսկական դադա-
վորներ են ստանում, և այնպէս են հա-
ւատում թէ քրիստոնէսայ մի եպիսկոպոս
և մահաբաւական քաղաքաւոր մի և նոյն
երկաթեայ գուաղանաւ պարտ են կա-
ռավարել յժողովուրդն, մտածալով մի-
անգամայն Պրիստոսի և նորա աշակեր-
տաց այնքան պատուէրներն այս մասին :
Հեղեւթ Բաւալ

ԱՅԴ

Կիլիկիան ընկերութեան ընդհա-
նուր Ժողովն նիստ ունի յառաջիկայ
կիրակի օր, 9 սեպտ. ի կեդրոնա-
կան վարժարանին Ղալաթիոյ :

Ատենիւր պիտի բացուի Ժամը
ճիշդ 6 ին

Ընկերք կը հրաւիրուին իրենց ըն-
կերական պարտականութիւնը կա-
տարելու փութալ :

Փ. Ատենագալիւր Ատենագալեա
Յ. Հաղարէան Մ. Չերու

Ի Լ Ա Ն

Ներկայից Երկրի մոտաւոր իշտ
մահաբաւոր նաւանէ վէ շերտիկը
մահաբարէնէն իւր միւսպայեա օր-
նաճաք պիտի իւրի քաղաքաւոր մի-
վարից մահաւոր պէտք տիրական
սիմ մեծիւրից իւրիւրի զոյ հիւստը իւ-
լէ պէհէր քաղաք քըրք պիւր դըւ-
շտ օլարաք իմպիւրի Եօհաննիսէ օ-
լուպ իւր լու միւնին ծնընձը բաղար
իրթէսի կիւնի մահաւորաւոր ինքա
օլունաւորընտան, իմպիւր իմպիւր օ-
լունարըն եւ վիմ մեղքիւրաւ ճարը
Շուրայի տաքիւրի կէլմէլըի :
2 իւլ 1879

ՊԱՅՐ ՍԵՐԱՍԵՐԻ

Ի Լ Ա Ն

Սիւրբիւրի կիւնէլ օլան դահարաթ
վարդար

Եհէրի իւրիւրն եհալմնձի ճու մա
կիւնիւ 33 նիւմէրօլը Նուրէթի նոմ
վարօր Եհէրիմահալէալէն սաաթ իւրի-
աէ հարէքթիլէ, Պէոյիւրաքէրէ, Թու-
րապիւ, Եհէրի քէոյ, Պոյաճը քէոյ,
Արնաւութ քէոյ, Չէնիլէ քէոյ, վէ
Գուղիւնձուդ իսկիւրիւրի օլարալա-
րաք Գէօփիւրի Եհէլէք տիր : վէ
սաաթ տէօրթտէ Գէօփիւրի Եհէլէք
քէթիլէ Սիւրբիւրի կիւնէլ տիր :

Մեղքիւր ճու մա կիւնիւ 3 նու-
մէրօլը Թօփիւրիւրի նոմ վարօր տա-
լի սաաթ ալթըտա Գէօփիւրի Եհէլէք
հարէքթիլէ Սիւրբիւրի կիւնէլ տիր :

Եհէրի մեղքիւրն սեքիւրիւրի ճու մա
իրթէսի կիւնիւ 33 նումէրօլը
Նուրէթի նոմ վարօր սաաթ իւրի
պուլալ գաա քէօփիւրի Եհէլէք իւր-
լէ, տաղը Սիւրբիւրի կիւնէլ տիր :

Սիւրբիւրի ամաթ իսկիւր օլան
վարդար

Եհէրի իւրիւրն եհալմնձի ճու մա
կիւնիւ 33 նումէրօլը վարօր սաաթ
սեքիւրիւր Սիւրբիւրի Եհէլէք իւր-
տօղը քէօփիւրի :

Եհէրի մեղքիւրն տօղը քէօփիւրի
Բաղար կիւնիւ 33 նումէրօլը վարօր
Սիւրբիւրի սաաթ ալթըտա հարէ-
քէթիլէ, քէօփիւրի կէլալ, անտիւն
Գուղիւնձուդ, Չէնիլէ քէոյ, Ար-
նաւութ քէոյ, Պոյաճը քէոյ, Եհէրի
քէոյ, Թարապիւ, Պէօյիւրաքէրէ,
Եհէրի մահալլէյէ կիւնէլէք :

Եհէրի մեղքիւրն օնուձու Բա-
ղար իրթէսի կիւնիւ սաաթ օն իւրի
տէ 3 նումէրօլը Թօփիւրիւրի նոմ վա-
րօր Սիւրբիւրի Եհէլէք իւր-
տա քէօփիւրի կէլէլէք տիր :

Վարօր իւմէթի 10 դըւր իւմ մեծ
Մեղքիւր իւմէթի 3 » » »
Զօնուր իւր իւրն նըմի պիլէթ տիր :

